# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N 356-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

____________________2024 թվականի N - Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N 356-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 23-ի «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող 2023-2028 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 356-Լ որոշման N 2 հավելվածում **կատարել հետևյալ փոփոխությունները՝**

- 1-ին կետի 1.2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1.2 | ««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում փոփոխություններ և | Բարձր | Սննդամթերքի անվտանգության ոլորտում քաղաքականության մշակման, թույլտվական փաստաթղթերի տրամադրման և վերահսկողության իրականացման գործառույթների և դրանք | Օրենքների նախագծերի ընդունմամբ կբացառվի շահերի բախումը և կապահովվի վերահսկողության իրականացման արդյունավետությունը | 2026թ. հուլիսի երրորդ տասնօրյակ | Տեսչ<br>մար<br>աշխ<br>համ<br>գրա<br><br>ՀՀ Է<br>նախ<br><br>Սննդ<br>անվ<br>տեսչ |

| | | | |
|---|---|---|---|
| | լրացումներ կատարելու մասին», ««Կերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Բուսասանիտարիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Անասնաբուժության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», օրենքների նախագծերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | | իրականացնող մարմինների տարանջատում |

- 1-ին կետի 1.3-րդ ենթակետի «Վերջնաժամկետը» սյունակում «2023թ.» թիվը փոխարինել «2026թ.» թվով, իսկ «Պատասխանատու կառույցը» սյունակում «ՀՀ էկոնոմիկայի նախարարություն» բառերը փոխարինել «Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ» բառերով.
- ուժը կորցրած ճանաչել.

ա. 2-րդ կետի 2.1-ին ենթակետը.

բ. 3-րդ կետի 3.1-ին, 3.2-րդ, 3.3-րդ ենթակետերը.

գ. 4-րդ կետի 4.2-րդ և 4.3-րդ ենթակետերը.

- 6-րդ կետի 6.1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6.1 | «Սննդամթերքի անվտանգության ոլորտի մասնագետների վերապատրաստման կարգը հաստատելու մասին» նախագիծը ՀՀ վարչապետի | Միջին | Սննդամթերքի անվտանգության ոլորտի մասնագետների շարունակական վերապատրաստում և կարողությունների | Սննդամթերքի անվտանգության ոլորտի մասնագետների վերապատրաստման կարգի մշակում և ներկայացում | 2028թ. հուլիսի երրորդ տասնօրյակ | ՀՀ էկ նախա Սննդա անվտ տեսչա ՀՀ կր |

| | | |
|---|---|---|
| աշխատակազմ ներկայացնելը | բարելավում | գիտու մշակո սպորտ նախա |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան